

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ԱՐՇԱԿ ԶՈՊԱՆԵԱՆԻ ԵՒ ԼԵՒՈՆ ԲԱՇԱԼԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆԻՆ

ՀԱՅԿ ԱԻՎԳԵԱՆ

haigavakian@yahoo.com

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Գիր ու գրականություն, ուրեմն, ձեռագիրներ՝ ձեռագիր կորուստ, ձեռագիր փրկում, ձեռագիր պահպանում, ձեռագիր հրատարակություն: Ձեռագրական աշխարհը դարձած է գրեթե անկախ ոլորտ մը՝ իր ինքնուրույն տրամաբանությամբ:

Հմայք մը կայ ձեռագիր հասկացության մէջ, անյայտ ոլորտներ թափանցելու կիրք մը՝ եթէ անիկա անտիպ է. վնասուածքային մեկամաղձութիւն մը՝ եթէ անիկա կորսուած է. հաւաքական յիշողութեան բաղձանք մը՝ եթէ անիկա դարձած է դիւանային (archival) վարմունքի առարկայ: Չեմ յաւակնիր որ հրապարակումս այս պատումէն անդին պիտի անցնի:

Եգիպտահայութեան պարագային, մամուլն ու մտաւորականութիւնը յատուկ վերաբերում ցուցաբերած են Արշակ Ալպոյաճեանի ձեռագիրներուն նկատմամբ, երբ յետմահու՝ 1965ին, Արտաշէս Գարտաշեանի եւ Էտմոն Կոտալազեանի (Երուանդ Ազատեան) ջանքերով եւ Գահիրէի Առաջնորդարանին ծախքերով (եգիպտահայոց առաջնորդ Մամբրէ Արք. Սիրունեանի հովանաւորությամբ ու աջակցությամբ), բանասերին ձեռագիրները կը փոխադրուէին Երեւանի Մեսրոպ Մաշտոցի Անուան Հին Ձեռագրերի Ինստիտուտ Մատենադարան, ուր կը պահուին մինչեւ այսօր: Բայց գրեթէ աննկատ անցած է այն իրողութիւնը, որ ձեռագիրներէն կարելոր մաս մը՝ անծանօթ՝ վերոյիշեալ անձերուն գիտակցութեան, մնացած է Գահիրէ, յաջորդաբար դարձած երկու յայտնի անձերու սեփականութիւնը եւ 2004ին - յոյսով եմ ժամանակաւորապէս - անյայտացած: Այս կորսուած ձեռագիրներուն մէջ կը գտնուէին, իմիջիայլոց, Ամասիայի, Մարգուանի, Սեբաստիայի, Եւդոկիայի, Պրուսայի, Այնթապի, Գոնիայի, Սամսոնի, Տրապիզոնի եւ Տարսոնի հայկական տպարաններուն մասին փաստաթուղթեր, որոնք մաս պէտք է կազմէին «Տպագրութեան Արուեստը Եւ Հայք» աշխատութեան: Երբ 2013ին, Վարդի Քէշիշեանի խմբագրությամբ Երեւանի մէջ առաջին անգամ լոյս կը տեսնէր Ալպոյաճեանի այս աշխատութիւնը՝ ըստ Մատենադարանը պահուող ինքնագիրին, յիշեալ գաւառներուն եւ քաղաքներուն յատկացուած զուխը, բնականաբար, կը բացակայէր:

Մամբրէ Արք., որ եռանդագին աջակցած էր Ալպոյաճեանի ձեռագիրներու Հայաստան առաքումի աշխատանքին, յետմահու չ'արժանանար նոյն վերաբերումին: Յայտնի է, որ սրբազան հայրը 1950ականներուն կը պահէր օրագրութիւն: Չորս ձեռագիր հաստափոր տետրակներ ապահով ապաս-

տան գտած են Գահիրեի Առաջնորդարանի Թորգոմեան Մատենադարանը: 1990ականներու վերջերը, սակայն, Էգպեթի հնավաճառ գրախանութներէն մէկուն մէջ պատահաբար յայտնաբերուեցան օրագրութեան 9 տետրակներ եւս², որոնք միւս չորսին հետ կը կազմեն եգիպտահայութեան տասնամեայ հետաքրքրական, թէեւ անխնդրայարոյց, պատմութիւն մը:

2005ին *Ծիծեռնակ* երաժշտական հանդէսը լոյս կ'ընծայէր Մերկեր Մելիքի ինքնագիր մը՝ որ կը բովանդակէր Համբարձում Լիմոնճեանի գրութեան հայերէն թարգմանութիւնը: Հրապարակումը հիմնուած էր զաղտագողի պատճենահանուած ձեռագրի մը վրայ, որ կը գտնուէր Գահիրեի ազգայիններէն մէկուն մօտ: Մերկեր Մելիքի ինքնագիր ձեռագրին ճակատագիրը, 2004էն ի վեր, կը մնայ անյայտ³:

Ներկայ դարասկիզբին, եգիպտահայ միութիւն մը կ'որոշէ ձերբազատիլ իր դիւանէն: Բարեկամի մը ահազանգին շնորհիւ կը փութամ վայրը: Աղբահաւաքին սպասող թուղթերու կոյտին մէջ կ'առանձնացնեմ երեք կարեւոր ծրարներ.-

1. Արփիար Արփիարեանի անձնական ծրարը, ուր կը գտնուէր իրեն հասցեագրուած նամակներու բացառիկ հաւաքածոյ մը:

2. Թէոդիկի նամակները՝ ուղղուած եգիպտահայ մարմնամարզիչ, *Ամէնուն Տարեցոյց*ներու թղթակից Արարատ Քրիսեանին:

3. Միքայէլ Կիրճեանի ֆրանսերէն բանաստեղծութիւններու սեւագրութիւնները:

Զանոնք փոխադրելով բնակարանս, կը կատարեմ առաջին երկուքին ամբողջական համակարգչային պատճենահանումները: 2001ին, Արփիարեանի եւ Կիրճեանի ծրարները կը յանձնեմ Երեւանի Զարենցի Անուան Գրականութեան եւ Արուեստի Թանգարան, իսկ Թէոդիկինը՝ Փարիզի Նուպարեան Մատենադարան: Թէոդիկի բոլոր նամակները կը հրատարակուին 2016ին⁴:

Արփիարեանի ծրարին գլխաւոր մասը կը կազմեն իր ստացած նամակները եւ բաց նամակները: Անոնց մեծամասնութիւնը կը վերաբերի մտաւորականի լոնտոնեան շրջանին: Արձաբժուած նիւթերը այլազան են, բայց առաւել շեշտադրուած կարելի է գտնել *Նոր Կեանք* պարբերականի եւ Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութեան առնչուող հարցերը⁵:

Մինչեւ ծրարին ամբողջական հրապարակումը Արփիարեանի սպանութեան 110ամեակին առիթով, իբրեւ նմուշ, ստորեւ կը ներկայացնեմ երկուքական նամակ Զօպանեանէն եւ Բաշալեանէն: Փորձ մը՝ մտնելու սիրուած գրողներու անձնական կեանքէն ներս եւ ճեղքելու անոնց գրական ճշդապահութիւնն ու մտածմունքի շիտակութիւնը:

Ա. Henry Céard⁶

Le Matin

25, rue d'Argenteuil, 25

Paris, le 29 Mars 1896

Cher Monsieur:

Auriez-vous la complaisance de me dire où je pourrais voir, demain lundi, les chefs zeïtouniotes dont on annonce l'arrivée à Paris?

S'il vous était possible de venir demain à 5h½ au *Matin* avec eux, vous me feriez bien plaisir et me procureriez l'occasion de faire un nouvel article en faveur de vos compatriotes.

Toujours bien à vous

Henry Céard

Բ. Արշակ Չօպանեան

Բարիզ, 31 Մարտ [18]96

Սիրելի Արփիար,

Ինձի շաբաթէն աւելի է որ նամակ չես գրած, եւ սակայն ամենակարեւոր խնդիրներու վրայ բաներ հարցուցած էի քեզի եւ պատասխաններուդ անհամբեր կը սպասէի:

Մէյ մը սա *Կարմիր գիրքին* գործը որոշէ եւ հաղորդէ, որ չուշանամ պարապ տեղը: Տպարանապետին խօսած եմ արդէն, եւ մարդը կը սպասէ կոր: Գարունը կու գայ կոր, պէտք է շուտ երեւայ գիրքը. ճիշդ ատենն է: Այդ 4-500 ֆր[անք]ը չե՞ս կրնար գտնել: Շուտ որոշէ, որպէս զի ուրիշ միջոց մը գտնենք հակառակ պարագային: Մեղք չէ՞ որ ասանկ գեղեցիկ գաղափար մը ջուրը իյնայ այդչափ պզտիկ գումարի մը համար:

Երկրորդ, աւելի կարեւոր բան մը ունիմ ըսելու: Մեծ սխալ մը ըրինք չորոշելով որ Ջէյթունի հերոսները վայրկեան մը Բարիզ մնան⁷: Բացի այն ահագին ցաւէն զոր ես զգացի անձնապէս՝ զիրենք տեսած չըլլալուս, մեր գործին համար ալ վնաս մը ըրած եղանք Բարիզի մէջ իրենց չերեւալովը: Մարսիլիա այնչափ բարեկամներ ունիմ, ոչ մէկը խորհեր է հեռագրել ինձի առաջուց որ միջոց մը գտնէի Բարիզ իջեցնելու զիրենք: Դո՞ւն ինչու չխորհեցար, եւ ինչո՞ւ չգրեցիր ինձի: Գիտե՞ս ինչ եղաւ: Պզտիկ մնացինք Բարիզի հայասէր թերթերուն առջեւ, եւ ապացուցած ալ եղանք որ Անգլիամուլներ, «Անգլիոյ մարդիկ» ենք, ինչպէս հոս մեզի կ'ըսեն: Դեռ cheftերը չեկած, Մարսիլիոյ թերթերէն առնելով, հինգ վեց բարիզեան թերթեր (*La Patrie, La France, L'Evenement, La Libre Parole*) ծանուցած էին անոնց ժամանումը ամենէն համակրական տողերով, սապէս՝ *Bientôt Paris va posséder les chefs de l'insurrection de Zeïtoun, ces héros...* Եւ ամէնքն ալ կը սպասէին որ *պիտի տեսնէին* ատ մարդիկը: Ես երէկ *Matin*ի թղթակիցէն նամակ մը առի (նամակը ներփակ կը դրկեմ) ուր կը խնդրէր որ cheftերը իրեն տանիմ որ յօդուած մը գրէ (պատկերնին ալ կը դնէր, ապահով եմ): Մարդուն քով պզտիկ չմնալու համար (ի՞նչպէս ըսէի որ ես իսկ, հայ, չեմ տեսած մեր հերոսները), գրեցի որ արդէն մեկնած էին Լոնտոն եւ ցաւ յայտնեցի որ ուշ իմացուցած է ինձի: Կը տեսնես որ Բարիզ աղմուկ կարելի էր հանել մեր հերոսները ներկայացնելով խմբագրապետ-

ներու եւ հայասէր ֆրանսացիներուն. մեր հերոսները արժանի էին այդ պատիւին, եւ Բարիզի մէջ պատիւ գտնելն ու իբր դիւցազն հռչակուիլն ալ կ'արժէ կարծեմ. եւ օգտակար չէ՞ր ըլլար մեզի, հիմա որ ամենէն աննշան թերթերն անգամ հայկական խնդրով զբաղիլ կը սկսին կոր:

Յետոյ, սա ալ ըսեմ որ հոստելի հայերն ալ խորապէս վշտացած են. վերջապէս, ըմբռնուելու էր որ Բարիզի հայ գաղթականութիւնը մեծ համակրութեամբ պիտի ընդունէր Զէյթունի քաջերը եւ շատ հետաքրքիր էր զանոնք տեսնելու: Ուսանողութեան մէջ մանաւանդ, իմ դրդումովս, գաղափար կար իրենց ճաշ մը տալու եւ ovation մը ընելու: Եւ այստեղի ուսանողները, որոնք Զէյթունի համար մասնաւոր երեկոյթ կազմեցին, եւ իրենց նեղ միջոցներով 1100 ֆր. դրկեցին Զէյթուն, կ'արժէին որ կարենային սեղմել Զէյթունի քաջերուն ձեռքը:

Մեղք, մեղք, վերջապէս: Հաւտալս չի գար կոր եղածին: Ի՞նչ կ'ըլլար եթէ Մարսիլիայէն ինծի բառ մը դրկէին, եւ gareը երթայի դիմաւորէի ուսանողներու պատգամաւորութեամբ մը, օր մը երկու կը կենային եւ յետոյ կ'երթային Լոնտոն: Մի՛ մեղադրեր ինծի որ առաջուց չգրեցի քեզի. ես շատ ուշ իմացայ. եւ յետոյ իմանալուս պէս, ինծի բնական երեւցաւ որ քանի որ Բարիզէն պիտի անցնին, անպատճառ ինծի կ'իմացնեն եւ զիրենք դիմաւորելու կ'երթամ:

Իմ հիացումս հաղորդէ իրենց, եւ խորունկ ցաւս ալ[՝] զիրենք տեսած չըլլալուս:

Եւ գրէ ինծի շուտով:

Քոյդ Ա. Չօպանեան

Յ. Գ. Տաճիկներու հետ միացման խնդրոյն վրայ պիտի գրեմ քեզի նորէն⁸: Հետզհետէ կը պաղիմ կոր այդ գաղափարէն: Մեր կորուստը կրնայ ըլլալ ատ: Ուժ չունին, եւ անպիտան մարդիկ են տաճիկները. Բիզայէն⁹ պէտք չէ դատել: Եւ Անգլիոյ մէջ ալ նոր շարժում մը սկսած է մեզի համար:

Գ.


Paris, 14 Rue Royer Collard

2 Հոկտ. [18]96

Սիրելի Արփիար,

Քեզի ամենէն սիրուն եւ ամենէն նոր անակնկալը կը դրկեմ զոր ունեցած ըլլաս յեղափոխականի ամբողջ կեանքիդ մէջ: Նամակս քեզի բերողը պելճիքացի խանդավառ տղայ մըն է, որ իրեն պէս երեք ընկեր ունի եղեր Լուվէնի մէջ, եւ որ կ'ուզէ իր ընկերներուն հետ Հայաստան երթալ եւ հայերը պաշտպանել տաճիկներուն դէմ (!): Երէկ իրիկուն եկաւ ինծի, եւ չորս հինգ ժամ խօսեցայ հետը: Drumontին¹⁰ գրեր է եւ անկից սիրուն նամակ մը ստացեր է. յետոյ Vernierն¹¹ տեսեր է, եւ ան ալ բարեբաղդաբար ինծի դրկեր է որ պէտք եղած տեղեկութիւնները տամ: Բարեբաղդաբար կ'ըսեմ, որովհետեւ գիտեմ թէ եթէ այս միամիտ ու ազնիւ

տղան Կիրեղեանին պէս սրիկայի մը ձեռքը անցնէր, ի՞նչ դժբաղդութիւններ առաջ կուգային:



Արդ, այս տղան լրագիրներու մէջ կարդալով Հայկական ջարդերուն նկարագրութիւնները, զայրոյթով լեցուեր է եւ (կրօնական կրթութիւն առնող մըն է առանց սակայն պարզ կրօնամոլ մը ըլլալու) որոշեր է, ինչպէս իր ընկերներն ալ, երթալ Հայաստան կոռուի, մեղցնել ու մեռնիլ: Եթէ հետը քիչ մը խօսիս, կը տեսնես որ խաբէութիւն մը չէ, Արփիար: Սրտաշարժ բան մըն է: Յուզմունքով մտիկ ըրի զինքը: Ի՞նչ սիրուն, ի՞նչ ազնուական ալ տղայ մըն է: Նախ ջանացի ցուցնել իրեն իր ջանքին չնչինութիւնը բարձուելիք աղէտքին մեծութեան առջեւ եւ ըսի որ պարապ տեղը չվտանգէ իր երիտասարդութիւնը, չի համոզուիր կոր. *որոշեր է*: Դպրոցի աշխատութիւնները անգամ ձգեր է. «5-10 օրէն պէտք է մեկնիմ» կ'ըսէ: Ան ատենը, քարտէսի մը վրայ՝ ամէն բան բացատրեցի իրեն: Ըսի որ եթէ անպայման կ'ուզէ ջարդերու երկիրը երթալ, պէտք է գիտնայ թէ այդ երկիրը անսահման է եւ իոն մարդ չի կրնար գործել անանկ ինչպէս որ կրնայ Լուվէնի մէջ: Ըսի որ նախ բուն Հայաստան երթալը անկարելիութիւն մը եւ անխելքութիւն մըն է. լաւագոյնը կամ Պոլիս երթալ եւ մեր յեղափոխականներուն հետ աշխատիլն է, կամ Կիլիկիա երթալ, հաստատուիլ հոն, քաշել իրենց ետեւէն իրենց պէս խանդավառներու խումբ մը, ուսումնասիրել երկիրը, եւ պատրաստուիլ ապագայ գործի մը՝ Զէյթունի մէջ: Ինքը Պոլիս երթալ չ'ուզեր կոր, թէւ բացատրեցի որ հիմա՝ այս վայրկեանիս՝ անելի Պոլիս կարելի է գործել քան թէ ուրիշ տեղ: Բայց ինքը չ'ուզեր կոր *conspiration*ներու մասնակից ըլլալ, որովհետեւ Պոլիս այդ կարելի է միայն ընել, ինքը կ'ուզէ *պայտերազմ* ընել *loyal* կերպով, զէնք զէնքի դէմ, եւ թուրք մեղցնել...: *Տղայ* մըն է: Կը մեղքնամ կոր ալ զինքը:

Կիլիկիա երթայ ի՞նչ ընէ խեղճ տղան: Թարմ տղայ, կը մեռցնեն՝ զինքը...: Եւ ոչ միայն Տաճիկները, այլ Հայերն ալ, աւա՛ղ, եւ Զէյթունցիները նոյն իսկ (entre nous): Ի՞նչ ընել: Անպատճառ տեղ մը երթալ, բան մը ընել կ'ուզէ կոր: Քեզի կը դրկեմ զինքը: Ըսի որ դուք նոր գերագոյն մարմինն էք եւ թէ դուք կրնաք իրեն ցուցնել ճամբան: Դուն անձնապէս խօսէ հետը, եւ մի՛ շատ ցուցներ ամենուն: Իրեն պատուիրեցի արդէն բացարձակ գաղտնապահութիւն, չխօսիլ ո եւ է Եւրոպացիի եւ նոյն իսկ ո եւ է Հայու. մենէ ալ Լեւոնը միայն տեսաւ զինքը: Կիլիկիոյ վրայ իրեն գաղափար տալու համար Զէյթունցիներէն մէկը առ եւ թող բացատրէ ամէն բան: Կը կարծեմ որ այս չորս ազնիւ տղաքը, չորս Եւրոպացիներ, ուժ մըն են մեզի համար: Խօսէ հետը, տե՛ս կրնաս մխիթարել զիրենք, այնպէս որ պարապ տեղը չվտանգուին խեղճ տղաքը եւ օգտակար ալ կարենան ըլլալ:

Պոլիս կամ Կիլիկիա, բան մը կրնան ընել: Կիլիկիա, քաղաքներէն մէկը, Մարաշ կամ Ատանա, կրնան հաստատուիլ իբր վաճառական եւ երկիրը ուսումնասիրել, մեզի թղթակից ըլլալ, ստակ գտնել մեզի՝ պելճիքացի հարուստներէ: Կամ Լոնտոն եղած ատեննին թող անգլիացիներն ալ տեսնեն, այն կամաւորները որ մեկնիլ պատերազմիլ կ'ուզէին, եւ պզտիկ խումբով մը երթան ուր որ կ'ուզեն, ուր որ պէտք է, Պոլիս կամ Կիլիկիա:

Յաւալին այն է որ դեռ շա՛տ երիտասարդ են: Ոչ մեծ հմտութիւն մը ունին, ոչ խորամանկ ու ճարտար մարդիկ են, ոչ իսկ զինուորական կարողութիւն ունին. խա՛նդ միայն. բայց ա՛յնչափ հայ տղաք կան որ խանդ ունին: - Ասոր համար, պէտք է ջանալ ամէն բանէ առաջ որ չվտանգուին պարապ տեղը:

Քոյդ

Ա. Չօպանեան

Յ.Գ. Լաւագոյն համարեցի այս նամակը ուղղակի քեզի դրկել եւ իր ձեռքը պարզ ներկայացնող նամակ մը տալ. ինք այսօր Louvain պիտի երթայ եւ վաղը պիտի գայ Լոնտոն:

Յ.Գ. Այս առիթով քանի մը ուրիշ ըսելիքներս ալ չմոռնամ: Ինծի ուղղակի նամակ գրելու սովորութիւնդ մոռցեր ես: Բայց ես քեզի գրեր եւ կարելոր առաջարկութիւններ ըրեր էի: Blue book¹² պիտի դրկե՞ս, կը փնտռե՞ս կոր. պատասխանդ կը սպասեմ:

Նոր Հնչակը¹³ շատ աղէկ է: Երկրորդ յօդուածդ մանաւանդ: Ուրախ եղայ որ անգլիերէնը հրատարակուեր է: Պիտի ջանամ որ ֆրանսերէն ալ հրատարակուի հոս. լաւ առերեսութիւն կ'ընէ, եւ կը հակակշռէ գոնէ Արմենականներուն ժընետի մէջ ըրած գէվգէվ խայտառակութիւններուն դէմ:

Այսօր մեր «մեծ քաղաքագէտ»ին պիտի երթամ եւ Հնչակն ալ անձամբ պիտի տանիմ իրեն: Վստահ եմ որ գոհ պիտի ըլլայ:

Գիտե՛ս որ մեծ կոհիներ ունեցանք հոս, ուսանողական ժողովին հետ, այդ խայտառակ Կիւրեղեանին պատճառով: Իր անկրթութեանը չկրնալով համբերել, հրաժարականս տուեր էի ժողովքին, մինակ աշխատելու

համար: Հրաժարականս ընդի. ժողովքին ներկայացուած իրիկունը այդ սինլըորը համարձակեցաւ ըսել հրապարակաւ որ ես intéressé մարդ մըն եմ եղեր, Բարիզ եկած՝ հայկական խնդիրը պատրուակ բռնելով փարա վաստակելու (!), թէ Պոլիս կը գրեմ եղեր որ հոս ամէն բան ընողը ես եմ եւ Պոլիսէն ինծի փարա կը դրկեն եղեր (եւ թէ այս մանրամասնութիւնը ինքը քենէ իմացեր է եղեր, եւ անունդ տուաւ, Արփիա՛ր), թէ վերջապէս ժողովքի երթալու տեղ ես ամէն գիշեր աղջիկներ կ'առնեմ տունս կը տանիմ եղեր... կը տեսնե՛ս, Արփիար, որ այդ սրիկային երես տալը ինչ արդիւնք ունեցաւ, եւ թէ ո՛րչափ անխոհեմ է ատանկ փսխունք մարդերու ըսել բաներ որոնք պէտք չէ՛ ըստին: Լեւոնը հոն չէր դժբաղդաբար այդ իրիկունը: Եւ թէւ 40 հոգի ներկայ էր, բացի Քօլօլէն եւ Մաքսուտէն որոնք զայրոյթի աղաղակներէ ուրիշ բան չկրցան արձակել, ոչ ոք բողոքեց: Ընդհակառակը ինծի դէմ hostile, արդէն պատրաստուած բազմութիւն մը գտայ: Կիւրեղեանը միոյն բան ըրեր է եղեր ամենուն տունը երթալ, խահվէները երթալ եւ ամբողջ complot մը պատրաստել ինծի դէմ, ինծի եւ Իսքենտէրին դէմ զոր մեծկակի ամբաստանութիւններով կը նախատեն կոր, իբր թէ յեղափոխութեան դէմ խօսած ըլլալուն համար դաւաճան մըն է եղեր եւ ազգային գործերէ վռնտուելու է եղեր:

Երբէք այսչափ զգուած չէի սա Հայոց ազգէն: Անցած իրիկուն ալ մեծ ընդի. ժողովք մը ըրինք, ընդի. ժողովք որ որոշուեցաւ Մարկոսեանին տունը կատարուած մասնաւոր գումարման մը մէջ, ուր պէտքը զգացուեցաւ ընդի. մարմին մը կազմելու Բարիզ՝ բոլոր propagandei ելն գործերուն վրայ հսկելու եւ զանոնք կանոնաւորապէս վարելու համար, մարմին մը որ *ամբողջ* գաղթականութիւնը ներկայացնէ: Եւ այս գաղափարը ընդունուելէն յետոյ, երեւակայէ՛ որ ընդի. ժողովքին իրիկունը Կիւրեղեանը հետը 20 հոգի մը բերած էր մասնաւոր կոուելու համար եկած, եւ ժողովքի մէջ ծեծկութեալ, բայց *ծեծկութեալ* բառին բուն իմաստով: Hideux բան մըն էր: Մեծ աղտոր սրահ մը ուր 150ի չափ հայեր ազգին ցաւերուն վրայ խորհելու համար ժողովուեր են եւ իրար ծեծեցին: - Բայց ատիկա ծառայեց ամբողջ գաղթականութեան աչքին զգուելի դարձնելու Կիւրեղեանն ու իր bandeը: Հիմա մենք, ես, Լեւոնը, Իսքենտէրը, Թնկըրը եւ ուրիշ շնորհքով մարդիկ, լուրջ մարմին մը պիտի կազմենք, եւ շատ լաւ պիտի կրնանք գործել: Եղած բան մըն է ատ:

Ա.

Դ. Լեւոն Բաշալեան

14, Rue Royer-Collard

Բարիզ, 21 յունուար [18]97

Սիրելի Արփիս,

Առտուն ստացայ նամակդ, եւ ցերեկին՝ դրկած ծրարներնիդ: Այս նամակիս հետ մէկտեղ՝ զանոնք ալ հիմակ բոսթան պիտի ձգեմ:

Շատ խուճապեր էիր այն ակնարկութենէն զոր ըրած էի դրամական նեղ կացութեանս: Բայց, գիտես, ես միշտ երկու ոտքի վրայ կ'իյնամ: Երէկ առտու դրամ առի Սէլանիկէն, ու այսօր գրպանս նորէն լեցուն է: Ինծի համար բնա՛ւ հոգ մի՛ ըներ: Այն օրը որ ա՛լ չկարենամ բան մը սպասել հօրեղ-բօրէս, վստահ եղիր որ բան մը կը գտնեմ ապրուստս ապահովելու համար:

Ղրկեցէք բոլոր ծրարները որ կ'ուզէք: Կանոնաւորապէս կը յանձնեմ զանոնք այստեղ նամակատունը:

Արթիւրը թող ելլէ փութով գայ Բարիզ: Իսկ Մոնթելիէ երթալու ծախքը սիրով փոխ կուտամ իրեն, քանի որ ունիմ: Մանաւանդ որ ասիկա առիթ մը պիտի ըլլայ ինծի կարենալու սեղմել իր ձեռքը:

Զօհրապը¹⁴... լաւ ուրեմն, չեմ կարծեր որ Զօհրապին երթամ, հակառակ բոլոր տեսութեանցդ որոնք ճիշմարիտ են թերեւս: Ի՞նչ ընեմ, ես չեմ կրնար յաղթել այս մասին ինքզինքիս: Կ'իմանամ որ ինքը զուարճութեանց կեանքի մը տուեր է ինքզինքը, եւ վերջերս բոզի մը գողցուցեր է... 1000 ֆրանքնոց պանքտոմս մը, ինչ որ չներեցի իր ապրած մարդու փորձառութեանը: Կ'ինը եւ չորս զաւակները - հիմակ չորս զաւակ ունի - Կ. Պոլիս ղրկեր է: Կը բնակի Լեւոն պէյ Փափագեանի եւ Մալխազունի անուն երիտասարդի մը քով, որոնք երկուքն ալ լաւ անուն չունին այստեղ՝ իբր միշտ յարաբերութեան մէջ մարդիկ Բարիզի օսմանեան դեսպանին հետ:

Երէկ իրիկուն Տիկին Քերոբեանին գացի, որ ժընէվէն դարձած է: Հիացումով խօսեցաւ Տարեկան Տեսութեանդ վրայ: Միշտ կը հարցնէ ինծի թէ պիտի կրնա՞ս երբեք Բարիզ գալ: Յոյսդ կուտամ միշտ:

Շաբաթաթերթ մը հրատարակելու¹⁵ գաղափարդ ես ալ կ'ընդունիմ: Ըրէ ուրեմն: Ես ու Արշակը¹⁶ ամէն աջակցութիւն կ'ընենք քեզի: Միայն թէ շատ չպիտի՞ յոգնիս: Ինչ որ է, մինչեւ հրատարակած ատենդ դեռ կը խօսինք այս մասին:

Զօհրապին խօսքը թէ թերթ մը պիտի հրատարակէ՝ պարզապէս blaffe մըն է: Ինք գիտես որ այդ մարդը չէ: Պարզապէս իր գրական մարդու անունը արդարացնելու համար է կարծեմ որ այդ խօսքը մէջտեղ նետած է: Այս նկատողութիւնը ուրեմն թող երբեք չկասեցնէ քեզի քու խորհուրդներուդ մէջ: Արշակը այս առտու Տիգրան Արփիարեանէն սիրուն նամակ մը առաւ: Տիգրանը ինծի ղրկած նամակի մը մէջ սիրուն բաներ ըսած էր Արշակին համար, եւ Արշակն ալ մասնաւոր նամակ մը գրեց իրեն, որուն պատասխանը կը ստանայ այսպէս: Ապուշ քէն մըն ալ այսպէս վերցաւ մէջտեղէն:

Էստեանը ելաւ Նիս գնաց: Երբ դառնայ հոս, անշուշտ կը տեսնուիմ հետը: Պըլզգլեանը կարծեմ կրնայ օգտակար ըլլալ ապագային, բայց ինծի պէս մէկը պէտք պիտի ըլլայ: Տեսնենք:

Հրանդ Օտեանը¹⁷... լաւ ուրեմն, այդ պարոնը չեմ գիտեր ինչո՛ւ ինէ բոլորովին հեռու կը մնայ, եւ կ'իմանամ որ իմ մասիս կը չարախօսէ! Եւ

ըսել թէ մէկ քանի ամիս առաջ գրականս եղած մէկ երկու ֆրանքը իրեն հետ կը բաժնէի: Մարդիկ ինչո՞ւ այսքան չար ու ապուշ են:

Կը կրկնեմ, Արթիւրին պէտք եղած դրամը փոխ կուտամ իրեն՝ Բարիզ հասնելուն:

Կը համբուրեմ աչքերդ:

Լ. Բաշալեան

Ե.¹⁸

Առաքումի հասցէ՝
Monsieur Arpiar Arpiarian
21, St Marys Road, 21
Westbourne Park
Bayswater
London, W

Փարիզի նամակատան կնիք՝ Paris, Av. de l'Opera, 23 Մարտ 1897

Լոնտոնի նամակատան կնիք՝ Paddington, W, 24 Մարտ 1897

14, Rue Royer-Collard

Բարիզ, 22 մարտ [18]97

Սիրելի Արփիարս,

Բաւական ուշացուցի այս անգամ նամակ գրելս: Հոգ չէ, քանի որ այս անգամ լեցուն նամակ մը պիտի ըլլայ գրելիքս:

Համառօտեմ վերջին օրերու կարեւոր դէպքերը, թէպէտ գիտեմ որ Աղասին¹⁹ արդէն կարեւորագոյն կէտերը գրած է քեզի:

Եղա՛ւ: Երիտասարդը²⁰ խոստումներու շրջանէն գործադրութեան ճամբան մտաւ: Այսօր սնտուկնիս ունինք 40000 ֆրանք! ու միանգամայն իրմէ *ստորագրուած* թուղթ մը որուն մէջ կ'ըսէ թէ մինչեւ մայիսի վերջը պիտի տայ մաս առ մաս մնացեալ 460,000 ֆրանքը: Գո՞հ ես:

Մեր «գորաւոր գլուխը» ստորագրեց 10,000 ֆրանք: Աս ալ սիրուն բան մըն է: Միւսներն ալ պիտի տան: Հիմակ կը սպասենք հետզհետէ երիտասարդէն գալիք նոր առաքումներուն. ինքը գումարը յանձնելուն իրիկունն իսկ Եգիպտոս գնաց, ուր պիտի մնայ երկու ամսուան չափ՝ իր հարստութեանը տիրանալու համար:

Մարկոսեանը այսօր պիտի ստանար «Արծուի պաշտպան ընկերութեան» 2000 ֆրանքէն աւելի դրամագլուխը: Դրամը պիտի դրկէ Զէյթուն իմ ցոյց տուած հասցէիս, - որովհետեւ ես միշտ իր «վստահութեան մարդը» կը մնամ: Լա՛ւ: Աղասին նախամեծար կը համարէր զայն գործածել տալ Մէրսինի, Հաճընի, Ատանայի մասնաճիւղերուն համար: Բայց ընկերութեան անդամներուն կամքը բացորոշ է, դրամը յանձնեցին պայմանով որ Զէյթուն դրկուի: Թող այնպէս ըլլայ: Մեզի մեր նպատակին կը ծառայէ ուժովցնել այդ արծուի բոյնը:

Ասոր համար, կարելի չպիտի ըլլայ *Մարտի*²¹ մէջ - տես արդէն այս անունով կը կոչեն - ծանուցանել այս նուիրատուութիւնը: Արծուի ընկերութեան անդամները արդէն իրենք որոշեր են յայտարարութեամբ մը ծանուցանել բոլոր թերթերուն մէջ թէ իրենց դրամագլուխը գործածուեցաւ որոշեալ նպատակին:

Ապահը²² մեկնեցաւ: Սրտաշարժ բան մը եղաւ իր մեկնումը: Շատ կը սիրէի այդ վագրի աչքերով անուշ տղան: Վերջին պահուն սիրտը ելաւ: «Ա՛խ, ըսաւ, միշտ ասանկ եղած է. տեղ մը կ'երթամ, մարդերու կը կապուիմ, բարեկամներ կը գտնեմ, ու ահա յանկարծ կը բաժնուիմ, մէկ ալ գուցէ չտեսնելու վախով:» Ես կը հաստամ որ նորէն պիտի տեսնենք իրար:

Գիտես որ Մեծ ծերունին 3000 ֆրանք տուաւ երէկ: Աղասին 1000ը երէկ վար դրաւ, ինչպէս ըսած էր ծերունին: - Այս նուիրատուութիւնը, ինչպէս ուզած էիր, յիշէ՛ *Մարտի* մէջ. - հայ մը՝ 3000 ֆրանք: Կը բաւէ:

Գրերը այսօր ճամբայ հանել տուի: Այս անգամ կարծեմ սխալ չեղաւ: Աղասին վճարեց 43.35 ֆր.:

Այս ամէնը՝ այսինչի վերաբերեալ: Հիմակ, նամակներդ դիմացս առած, տեսնեմ ի՞նչ կայ պատասխանելիք:

Տեսնես սիրտս ի՞նչպէս կտոր կտոր եղաւ մարտ 18ի նամակէդ: Ինչո՞ւ ինծի առաջուց իմաց չտուիր: Ասիկա աններելի է: Գիտցած ըլլաս որ, որչափ ալ նեղն ըլլամ, գրպանս մէկ սանթիմ իսկ չըլլայ, *միշտ* քեզի համար դրամ կրնամ գտնել: Այնչափ ուրիշներու համար օգնութիւն կը գտնեմ, ու պէ՞տք է որ դուն, դուն, ատանկ չարաչար նեղութեան օրեր անցընէիր: Չեմ մաղթեր որ ուրիշ անգամ ասանկ փորձանքի հանդիպիս, բայց ուրիշ ատեն չպիտի ներեմ ասանկ բան մը:

Եթէ անմիջապէս չդրկեցի ուզած դրամդ, պատճառը այն էր որ նոյն օրը իսկ Ապահ-Աղասիին ըսի դրկել 900 ֆրանքը:

Արթիւրին համար՝ ըրած կարգադրութեանդ կը սպասեմ: Իմ շահերուս պաշտպանութիւնը դուն ձեռքդ առնելէդ ետքը՝ ա՛լ ապահով կը քնանամ:

Ո՛վ ըսաւ որ Շահնազարը²³ Պոլիս դարձեր է: Դեռ այս առտու իսկ Արշակը իրմէ նամակ առաւ: Շո՛ւտ դրկէ իրեն նամակդ:

Շահէնը չորս-հինգ օրէն պիտի յանձնէ *Մարտի* գլուխը: Տեսնենք ի՞նչ պիտի ջինէ:

Նատիրը ահռելի սրիկայ մըն է: Բաց քարդ-բոսդալ մը դրկեր է Արշակին՝ Կիւրեղեանին հասցէով: Մէջը խեղճ Արշակը, քեզ ու իս կը մկրտէ չեմ գիտեր ինչ աղտոտ ածականներով: Թութի, ու ուրիշ բանի վրայ մտածեցի:

Շատ համբոյր
Լեւոն Բաշալեան

Յ. Գ. Պիտի մոռնայի կարետոր բան մը:

Սվազլիին²⁴ լուրթիւնը կը սկսի տարօրինակ դառնալ: Մեր յանձնախումբին ժողովներուն մէջ օձիքս կը բռնեն միշտ: Ի՞նչ ընեն: Մերիները, քիչ մը չափազանցօրէն bureauի մարդ[իկ], սապէս ըմբռնե[ր]

են իրենց *ligne de conduite* թե՛ գործի սկսելէ առաջ պէտք է ի ձեռին ունենան այն ընդարձակ տեղեկութիւնները զորոնք Սվազլըն պիտի տայ, իր խոստման համեմատ, գործին ընդհանուր գծերուն վրայ, մանաւանդ որ տեղւոյն վրայ կ'ուսումնասիրէ խնդիրը: Ապա ամիսէն շատ աւելի է որ նամակ մը գրեցինք իրեն՝ խնդրելով իրմէ տեղեկացնել թե՛ գործի սկսելու պայմանները որո՞նք են, թե՛ Հելլենական յանձնախմբերը պիտի իրապէս օժանդակե՞ն մեզ, թե՛ կարելի է զէնք գտնել Յունաստան, փոխադրանաւներ ունենալ անոնցմէ մեր տրամադրութեան տակ, եւայլն:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ Ալպոյաճեանի ձեռագիրերուն մանրամասն պատմութիւնը, ներառեալ «թալանուած» թղթածրարներուն հանգամանքներն ու հանգրուանները՝ մինչեւ անոնց անհետացումը 2004ին տե՛ս՝ Հ. Ա., «Արշակ Ալպոյաճեանի Ձեռագրական Ժառանգութիւնը», *Ջահակիր*, թիւ 1774-1776, 8 եւ 22 Սեպտ. եւ 6 Հոկտ. 2016:
- ² Զանոնք գնելով ի պահ կը մնան մօտս՝ տպագրութեան ակնկալութեամբ եւ յոյսով:
- ³ Հրապարակումը, ինչպէս եւ ձեռագրական հանգամանքները տե՛ս՝ «Համբարձում Լիմոնճեանի Աշխատութիւնները՝ Մերկեր Մելիքի Թարգմանութեամբ եւ Ծանօթագրութեամբ», *Ծիծեռնակ, Եռամսեայ Երաժշտական Յաւելուած Ջահակիր Շաբաթաթերթի*, Գահիրէ, Ե. տարի, թիւ 1 (17), Յունուար 2005, էջ 3-122:
- ⁴ *Թէոդիկի Նամակները Արարադ Քրիսեանին*, խմբ.՝ Հ. Ա., *Ջահակիր Շաբաթաթերթ, Յաւելուած Գ.*, Գահիրէ, 2016:
- ⁵ Ահաւասիկ անոնց համառօտ նկարագրութիւնը.՝
 Փարիզի հասցէով՝ 1. Բաց նամակ Մ. Էրամէ, Փարիզ, Մարտ 1896: Լոնտոնի հասցէներով՝ 2. Նամակ Արշակ Զօպանեանէն, Փարիզ, 31 Մարտ 1896: Ներփակ կը գտնուի Փարիզի *Le Matin* լրագիրի թղթակից Անրի Սէարի ֆրանսերէն նամակը ուղղուած Զօպանեանին (տե՛ս՝ հրապարակումը): 3. Նամակ, ստորագրութիւնը՝ անյայտ (նոր փակուած Հայրենիքի աշխատակից մը), 4. Պոլիս, 23 Ապրիլ (հ.տ)/5 Մայիս (ն.տ.) 1896: 4. Բաց նամակ, ստորագրութիւնը՝ անյայտ, Մարսիլիա, 16 Մայիս 1896: 5. Նամակ Օտեանէ (Երուանդ Օտեանի ազգական մը), Փարիզ, 7 Սեպտեմբեր 1896: 6. Բաց նամակ Տիրան Քէլէկեանէն, Փարիզ, 17 Սեպտեմբեր 1896: 7. Նամակ Արշակ Զօպանեանէն, Փարիզ, 2 Հոկտեմբեր 1896 (տե՛ս՝ հրապարակումը): 8. Նամակ Պ. Կ. Աղօեանէն, Նիւ Պրիթըն (ԱՄՆ), 15 Նոյեմբեր 1896: 9. Նամակ, ստորագրութիւնը՝ անյայտ, վայրը՝ անյայտ (հաւանաբար՝ Փարիզ), անթուակիր (ըստ բովանդակութեան պէտք է գրուած ըլլայ 1896-1897ի շրջանին): Նոյն ձեռագիրն է ինչ թիւ 19ը: 10. Նամակ Լեւոն Բաշալեանէն, Փարիզ, 21 Յունուար 1897 (տե՛ս՝ հրապարակումը): 11. Բաց նամակ Ա. Օհանջանէն, Լոնտոն, 16 Փետրուար 1897: 12. Նամակ Լեւոն Բաշալեանէն, Փարիզ, 22 Մարտ 1897 (տե՛ս՝ հրապարակումը): 13. Նամակ Թէնուֆ Արփիարեանէն (մայրը), Կ. Պոլիս, 30 Յունիս 1897: 14. Բաց նամակ Տիգրան Արփիարեանէն (եղբայրը), Գահիրէ, 26 Յուլիս 1897: 15. Բաց նամակ Մելքոն Փափագեանցէն, Լոնտոն, 17 Օգոստոս 1897: 16. Նամակ Ս. Յակոբեանէն, Ֆոլ Ռիլըր (ԱՄՆ), 3 Դեկտեմբեր 1898: 17.

Նամակ Ղեւոնդէ, Երուսաղէմ, 21 Դեկտեմբեր 1898 (հ.տ.)/2 Յունուար 1899 (ն.տ.): 18. Բաց նամակ Օրիորդ Մ. Սուքիասէ (*Նոր Կեանքի* բաժանորդագրուի, Պոլկարիա (քաղաքը՝ անյայտ), 4 Մարտ 1899: 19. Նամակ, ստորագրութիւնը՝ անյայտ, Փարիզ, 18 Մարտ 1899: Նոյն ձեռագիրն է ինչ թիւ 9ը: 20. Նամակ Ալիքսան Արփիարեանէն (Եղբայրը), Կ. Պոլիս, 22 Ապրիլ (հ.տ.)/3 Մայիս (ն.տ.) 1899: 21. Նամակ Արտաշէս Յ. Քէօլէեանէն (L. S. Ayres & Co.), Ինտիանափոլիս (ԱՄՆ), 28 Ապրիլ 1899: 22. Նամակ Սուրէն Սուրէնեանէն, Նիւ Եորք, 14 Յուլիս 1899: 23. Նամակ Կարապետ Յ. Փափագեանէն (The Metropolitan Engraving Company), Պոսթոն, 17 Յուլիս 1899: 24. Նամակ Կարապետ Յ. Փափագեանէն, Պոսթոն, 3 Հոկտեմբեր 1899: 25. Նամակ Կարապետ Յ. Փափագեանէն, Պոսթոն, 12 Հոկտեմբեր 1899: 26. Բաց նամակ Ս. Մէլիքեանէն (*Նոր Կեանքի* բաժանորդ), Քոսթանցա (Ռումանիա), 20 Յունուար 1900: 27. Նամակ Մ. Կիւմշեանէն (*Նոր Կեանքի* բաժանորդ), Մարսիլիա, 8 Փետրուար 1900: 28. Բաց նամակ Կարապետ Յ. Փափագեանէն, Պոսթոն, 13 Փետրուար 1900: 29. Նամակ Կարապետ Յ. Փափագեանէն (Armenian Rug & Carpet Renovating Works), Պոսթոն, 5 Մարտ 1900: 30. Նամակ Արամ Ասքանազէն, Պոսթոն, 27 Մարտ 1900: 31. Նամակ Կարապետ Յ. Փափագեանէն, Պոսթոն, 28 Մարտ 1900: 32. Նամակ Կարապետ Յ. Փափագեանէն, Պոսթոն, 17 Ապրիլ 1900: 33. Նամակ Կարապետ Յ. Փափագեանէն, Պոսթոն, 1 Մայիս 1900: 34. Նամակ Սարգիս Ռստիկեանէն, Ուորչեսթըր, Մենչուսէց, 8 Մայիս 1900: 35. Նամակ Կարապետ Յ. Փափագեանէն (Armenian Rug & Carpet Renovating Works), Պոսթոն, 22 Մայիս 1900: 36. Նամակ Արտաշէս Յ. Քէօլէեանէն (L. S. Ayres & Co.), Ինտիանափոլիս (ԱՄՆ), 31 Մայիս 1900: 37. Նամակ Սարգիս Ռստիկեանէն, Ուորչեսթըր, Մենչուսէց, 10 Յուլիս 1900: 38. Նամակ Լեւոն Բաշալեանէն, Փարիզ, 19 Յուլիս 1900: 39. Նամակ Սարգիս Ռստիկեանէն, Ուորչեսթըր, Մենչուսէց, 7 Օգոստոս 1900: 40. Նամակ Յովհաննէս Յակոբեանէն, Ռայփոն (ԱՄՆ), 4 Հոկտեմբեր 1900: 41. Բաց նամակ Մ. Թէլեանէն, Պրիքսէլ, 23 Հոկտեմբեր 1900: 42. Նամակ Կարապետ Թումայեանէն, Չիկուէ, Լոնտոն, 15 Նոյեմբեր 1900: 43. Նամակ Ղ. Պոյաճեանէն (Հայ Երիտասարդաց Թանգարանի Միութիւն), Նիւ Եորք, 17 Դեկտեմբեր 1900: 44. Նամակ Սուրէն Պարթեւեանէն, Լին, Մենչուսէց, 2 Փետրուար 1901: 45. Բաց նամակ Սուրէն Պարթեւեանէն, Հիւսիսային Քենզինկթըն, Լոնտոն, 11 Յունիս 1901: 46. Բաց նամակ, ստորագրութիւնը՝ անյայտ, Լոնտոն, 19 Յունիս 1901: 47. Նամակ Արտաշէս Յ. Քէօլէեանէն (L. S. Ayres & Co.), Ինդիանապոլիս (ԱՄՆ), անթուակիր: 48. Նամակ Լեւոն Բաշալեանէն, Փարիզ, անթուակիր: Անյայտ հասցեով՝ 49. Նամակ, ստորագրութիւնը անյայտ, անթուակիր (պէտք է գրուած ըլլայ 1902ին կամ աւելի ուշ), առանց վայրի: Վերջապէս, կը գտնուի մէկ ֆրանսերէն նամակ մը՝ Ozanian ստորագրութեամբ, Լոնտոն, անթուակիր, առաքումի հասցէն՝ անյայտ: Ծրարը կը բովանդակէ այլ անձերու վերաբերող նամակներ եւ, *Նոր Կեանքի*ն ուղղուած բանաստեղծութիւն մը, հեռագիրներ, հաշիւներ, հասցէներ, ստացագիրներ, եւն.:

⁶ Փարիզի *Le Matin* լրագիրի թղթակից Անրի Սէարի ֆրանսերէն նամակը՝ հասցեագրուած Արշակ Չօպանեանին: Իր 31 Մարտ 1896 թուակիր նամակով

(տե՛ս՝ յաջորդ նամակը) Չօպանեան զայն ներփակ կ'ուղարկէ Արփիարեանին: Այս ֆրանսերէն նամակին վրայ Չօպանեան հայերէն կ'աւելցնէ Արփիարեանին ուղղուած հետեւեալ նախադասութիւնը. «Այս նամակը դարձուր ինձի անպատճառ»: Յստակ է, որ Արփիարեան զայն չէ վերադարձուցած:

⁷ Խօսքը Զէյթունի 1895ի ապստամբութեան վեց հերոսներու մասին է՝ Աղասի, Հրաչեայ, Ապահ, Մլեհ, Նշան եւ Կարապետ: Ապստամբութենէն ետք, երոպական տէրութիւններու միջամտութեամբ, անոնք Մերսին-Ադըքսանդրիա-Մարսէյ ճանապարհով կը մեկնին Լոնտոն՝ այնտեղ հաստատուելու նպատակով (*Հնչակ*, Լոնտոն, իններորդ տարի, թիւ 7, 2 Ապրիլ 1896, էջ 51-53):

⁸ Նկատի ունի արտասահման ապաստանած այլախոհ թուրքերու հետ գործակցութիւնը:

⁹ Ահմէտ Ռիզա (1859-1930)՝ երիտթուրքերու առաջնորդ: 1895ին Փարիզի մէջ կը հրատարակէ *Meşveret* լրագիրը՝ որ կը դառնայ աքսորեալ երիտթուրքերու հաւաքավայրը:

¹⁰ Էտուար Տրիմոն (1844-1917)՝ ֆրանսացի գրող եւ լրագրող, *La Libre Parole* լրագիրի հիմնադիր եւ խմբագիր:

¹¹ Անրի Վերնիէ՝ ֆրանսացի գրող եւ լրագրող, աշխատակցած է Տրիմոնի *La Libre Parole*-ին:

¹² *Կապոյտ գիրքը* (Blue Book) բրիտանական մարմիններու հրատարակած պարբերագիրք մըն է՝ կապոյտ կողքով, որ կը բովանդակէ պաշտօնական տեղեկատուութիւն զանազան նիւթերու մասին:

¹³ Հնչակեան Կուսակցութեան *Հնչակ* թերթը հիմնած է Աւետիս Նազարբէկեան 1887ին, Ժընեւ: Իսկ 1896ի նոր *Հնչակ*-էն լոյս տեսած է ընդամէնը չորս թիւ: Անոր համառօտ պատմութիւնը կու տայ Ռուբէն Խուրշուդեան.

«Դեռ 1896 թուականին հնչակեանների կուսակցութիւնն ապրեց մի աղէտալի պառակտում: Արեւմտահայ հնչակեանների մի խումբ՝ Արփիար Արփիարեանը, Միհրան Տամատեանը, Միհրան Սվազլը, Լեւոն Մկրտիչեանը, Անտոն Ռշտունին, Աղասին, Ապահը եւ ուրիշներ, կուսակցութեան Լոնդոնի համագումարում անջատուեցին նրանից:

«Ամէն մի քաղաքական կուսակցութեան պառակտում էլ ուղեկցում է կուսակցական ունեցուածքի բաժանմամբ: Այդ վիճակից չխուսափեց նաեւ *Հնչակը*: 1896 թուականի սեպտեմբերի 24-ին պառակտուած խումբը լոյս ընծայեց զուգահեռ *Հնչակ* լրագիրը՝ նոյն խորագրով, նոյն տառերով, լոյս ընծայման տուեալներով: Սեպտեմբերի 28-ին պառակտուած խմբի դատապաշտպանը դատարանի միջոցով Նազարբէկեանից պահանջեց փակել իր *Հնչակը*: Այդ ժամանակ Նազարբէկեանը պատասխան յայտ ներկայացրեց պառակտուած խմբին՝ մեղադրելով իր թերթի անուան ու ձեւի իւրացման փորձի մէջ:

«Սկսուեց մի աղմկալի դատաքննութիւն, որի նմանը չէր եղել Մեծ Բրիտանիայի իրաւաբանական պրակտիկայում: Այդ դատաքննութեան օրինակը մտել է անգլիական դասական իրաւաբանական գրականութեան մէջ: Անգլիական բոլոր խոշորագոյն թերթերը գրեցին այդ դատավարութեան մասին:

«Անցնելով դատական բոլոր ատեաններով՝ Նազարբէկեանը կարողացաւ պաշտպանել իր *Հնչակը*: Անգլիական արդարադատութիւնը պառակտուած խմբի գործողութիւնները գնահատեց որպէս ոտնձգութիւն մասնաւոր

սեփականության դեմ, քանզի *Հնչակը* փաստորեն (ներկայացուած էին բոլոր ֆինանսական հաշիւները) լոյս էր ընծայում Նազարբէկեանի միջոցներով: 1897 թուականի Փետրուարի 13-ին դատաւոր Չըսթիս Նորթը «ի նպաստ Նազարբէկի հաստատեց իր վճիռը, մշտնջենաւոր կերպով արգելք դնելով Սվազլըին *Հնչակ* անուն հրատարակութիւն հանելու» (*Հայ Պարբերական Մամուլի Պատմութիւն XVIII-XIX Դարեր, Հտր. 1, Գահիրէ, 2006, էջ 667-668*):

¹⁴ Գրիգոր Զօհրապ (1861-1915)՝ յայտնի գրող եւ փաստաբան: Բաշալեանի եւ Զօհրապի յարաբերութիւնները եղած են պրկուած (Աբգար Ափինեան, *Գրիգոր Զօհրապ. Յեղափոխական Մտաւորականը*, Երեւան, Մշակոյթ Հրատ., 2015):

¹⁵ Խօսքը *Մարտ* ամսաթերթի մասին է, զոր Արփիարեան պիտի հիմնէր Լոնտոնի մէջ 1897ին եւ հրատարակութիւնը շարունակէր մինչեւ 1901:

¹⁶ Խօսքը Արշակ Զօպանեանի մասին է:

¹⁷ Հրանդ Օտեան՝ Երուանդ Օտեանի մեծ եղբայրը:

¹⁸ Գրութեան վայր՝ Փարիզ, գրութեան թուական՝ 22 Մարտ 1897, առաքումի վայր՝ Լոնտոն: Պահպանուած է նամակին պահարանը:

¹⁹ Աղասի (Կարապետ Թուրսարգիսեան) (1871-1937): Եղած է Զէյթունի 1895ի ապստամբութեան հերոսներէն մէկը: Նպատակ ունենալով ապստամբութիւնը դարձնել զանգուածային, զայն սկսած է նախապատրաստել 1890էն՝ շրջագայելով Պէյրութ, Հալէպ, Քիլիս, Մուսա լեռ, Տէօրթ Եոլ, Այնթապ, Մարաշ, Զլկանց, Հասան Պէյլի, Չորք Մարզուան, Քիլիսէճիք եւ այլ գիւղեր ու քաղաքներ (*Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան 1887-1962, Ա. Հտր., խմբ.՝ Ա. Կիտուր, Պէյրութ, Տպ. Շիրակ, 1962, էջ 162-184*): Արփիարեանի, Միհրան Տամատեանի, Մկրտիչեանի, Ռշտունիի, Աղասիի, Ապահի, Հրաչեայ Մարալի եւ ուրիշներու հետ եղած է Վերակազմեալ Հնչակեաններու հիմնադիրը: Հեղինակն է զանազան գիրքերու, ինչպէս՝ *Զէյթուն եւ իր շրջականները* (Ա. տիպ՝ Փարիզ, 1895. Բ. տիպ՝ Պէյրութ, Տպ. Շիրակ, 1969), *Զէյթունի Հերոսները. Դիցագներգութիւն Հինգ Արարուած, Եօթը Պատկեր* (Գահիրէ, Տպ. Սֆինքս, 1906):

²⁰ Խօսքը Աղասիի մասին է, որ 26 տարեկան էր այդ ժամանակ:

²¹ Տե՛ս՝ ծնթ. 15:

²² Ապահ՝ Զէյթունի 1895ի ապստամբութեան հերոսներէն եւ Վերակազմեալ Հնչակեաններու հիմնադիրներէն: Գահիրէի մէջ հրատարակած է երկու գիրք՝ *Պատասխանապոյնները. Բաց Նամակ Բոլոր Հնչակեան Ազնիւ Զինուորներուն* (1906) եւ *Հայ Արծիւներու Բոյնը. Դրուագներ Զէյթունի 1895-ի Դէպքերէն* (1918):

²³ Յովհաննէս Շահնազար (1857-1942)՝ գրող, հասարակական գործիչ, 1891ին Արփիարեանի հետ Պոլսոյ մէջ հիմնադրած ու խմբագրած է *Հայրենիք* օրաթերթը:

²⁴ Միհրան Սվազլը (Սվազլեան) (1863, Զմիւռնիա-1935, Պոսթօն)՝ եղած է Վերակազմեալ Հնչակեաններու հիմնադիրներէն մէկը եւ կեդրոնական վարչութեան անդամ (*Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան, էջ 268-269*): Ծաւալած է գրական, հասարակական ու մարդասիրական լայն գործունէութիւն Կիպրոսի, Բրիտանիայի եւ ԱՄՆի մէջ (Քնարիկ Աագեան, «Միհրան Սվազլեան. Մարդը, Հայրենասէրը», *Գիտութեան Աշխարհում*, Երեւան, էջ 14-18):

LETTERS OF ARSHAG CHOBANIAN AND LEVON PASHALIAN TO ARPIAR ARPIARIAN
(Summary)

HAIG AVAKIAN
haigavakian@yahoo.com

Sultan Abdul Hamid used the occupation of the Ottoman Bank by Armenian revolutionaries as a pretext to persecute Armenian national and cultural figures in Constantinople and give the green light to extensive massacres in the Armenian *Vilayets*. Indeed, the era 1896 to 1908 is considered the most repressive of Abdul Hamid's regime. Several Armenian political figures fled the Empire and settled in Europe, particularly in France and Great Britain, while others resumed their anti-oppression activities from Egypt. Among these figures was Arpiar Arpiarian (1851, Constantinople-1908, Cairo), a western Armenian author, editor, publisher and a renowned revolutionary member of the Social Democratic Hunchak Party.

The letters, dated 1896 and 1897, are addressed to him by two of his revolutionary friends, Arshag Chobanian and Levon Pashalian.

The letters are just a few in a bundle of letters addressed to Arpiarian. They discuss matters related to the propagation of the Armenian cause in Europe, pro-Armenian sympathy in Europe, and issues of collaboration with dissident young Turks; they also reflect the life and concerns of Armenian nationals living in exile.

